# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **7 հունիսի 2021թ.**

2021թ-ի հունիսի 3-7-ը ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ նաև՝ «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ) շենքում տեղի ունեցավ կահույքի ձեռքբերման ՆՄԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Թ. Զաքարյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պետ, |
| Ս. Հարությունյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պարետ, |
| Ա. Մխիթարյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի հաշվապահ, |
| Մ. Մեհրաբյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի տնտեսական բաժնի պահեստապետ, |
| Ա. Ջաբաղյան՝ | «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի մարկետինգի մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Թ. Զաքարյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «Նորք» տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամի ֆինանսաբյուջետային բաժնի գնումների մասնագետ Հ. Գուլաբյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

### 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ-ի հունիսի 3-ին, ՀՀ, ք. Երևան, Կարապետ Ուլնեցու 68 հասցեում գտնվող ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի շենքում ժամը 09:15-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված գնման առարկաների ձեռքբերման համար առավելագույն ընդհանուր գները"

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | TV պահարան | 232800 |
| 2 | Կողադիր պահարան | 78000 |
| 3 | Երկտեղանի աշխատասեղան | 624000 |
| 4 | Աշխատասեղան | 168000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | ՀՀ, ք. Երևան, Իսակովի պող. 44/1 | +374 91 113388 | gorshekoyan@mail.ru | 66948583 |
| 2 | «Առկտուր» ՍՊԸ | ՀՀ, Երևան, Կոմիտաս 1/253 | +374 10 268480 | sss.arktour@gmail.com | 00056517 |
| 3 | «ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | - | - | - | - |
| 4 | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Գ1 թաղամաս Հ1 | +374 91 799907 | tender@profal.am | 01831375 |
| 5 | «Սֆերա» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Գյուրջյան 15 | +374 10 701705 | accounting@sphera-design.net | 02573318 |
| 6 | «Սոնարտ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան, Ա. Սերոբ 5շ. 3բն | +374 94 733940 | sona-kazaryan.90@mail.ru | 00221221 |
| 7 | «Դամկար» ՍՊԸ | ՀՀ, գյուղ Արգավանդ, Սուրբ Սարգիս 1/2 | +374 98 989898 | damkar777@mail.ru | 04428836 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ ««ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻՋ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ տվյալ ընկերությունը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում (05.05.2021-05.05.2023թթ.)։ Վերջինիս հայտը գնահատվել է անբավարար, մերժվել է և armeps համակարգի միջոցով չի բացվել։

Կողմ՝ 5, դեմ՝ 0։

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ.

- **«Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ**-ի կողմից ներկայացված՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով

պահանջվող մասնակցի կոմից առաջարկվող ապրանքի տեսքի և նմուշի/նկարի/ վերաբերյալ տեղեկատվությունները:

- **«Պրոֆ Ալ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝

✓ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցին սպասարկող բանկի և բանկային հաշվեհամարի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև՝ իրական շահառուի վերաբերյալ աղյուսակում բացակայում է իրական շահառուի հայրանունը:

✓ ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի կոմից առաջարկվող ապրանքի տեսքի և նմուշի/նկարի/ վերաբերյալ տեղեկատվությունները:

- **«Սոնարտ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ ապրանքի ամբողջական նկարագիրը, համաձայն՝ Հավելված 1.1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի կոմից առաջարկվող ապրանքի տեսքի և նմուշի/նկարի/ վերաբերյալ տեղեկատվությունները:
- **«Դամկար» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարության փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 1-ի, թերի է, մասնավորապես՝ բացակայում է **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության չափաբաժինների համարները:
- **«Սֆերա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված գնային առաջարկի փաստաթուղթը, համաձայն՝ Հավելված 2-ի, թերի է, մասնավորապես՝ գները ներկայացված չեն տառերով, ինչը չի համապատասխանում **ՆՄՏԻԿ-ԳՀԱՊՁԲ-21/13** ծածկագրով գնման ընթացակարգի հրավերավ սահմանված վավերապայմաններին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակից/ներ/ի գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | TV | «Գոռ Շեկոյան | 232800 | 230000 | 0 | 230000 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | պահարան | Էդուարդի» Ա/Ձ | | | | |
| | | «Առկտուր» ՍՊԸ | | 129000 | 25800 | 154800 |
| | | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | | 92500 | 18500 | 111000 |
| | | «Սֆերա» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Սոնարտ» ՍՊԸ | | 180000 | 36000 | 216000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | | 183250 | 36650 | 219900 |
| 2 | Կողադիր պահարան | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | 78000 | 74000 | 0 | 74000 |
| | | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | | 35000 | 7000 | 42000 |
| | | «Սֆերա» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Սոնարտ» ՍՊԸ | | 95000 | 19000 | 114000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | | 60000 | 12000 | 72000 |
| 3 | Երկտեղանի աշխատասեղան | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | 624000 | 600000 | 0 | 600000 |
| | | «Առկտուր» ՍՊԸ | | 479800 | 95960 | 575760 |
| | | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | | 250000 | 50000 | 300000 |
| | | «Սֆերա» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Սոնարտ» ՍՊԸ | | 460000 | 92000 | 552000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | | 491500 | 98300 | 589800 |
| 4 | Աշխատասեղան | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | 168000 | 168000 | 0 | 168000 |
| | | «Առկտուր» ՍՊԸ | | 124700 | 24940 | 149640 |
| | | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | | 112500 | 22500 | 135000 |
| | | «Սֆերա» ՍՊԸ | | - | - | - |
| | | «Սոնարտ» ՍՊԸ | | 230000 | 46000 | 276000 |
| | | «Դամկար» ՍՊԸ | | 133200 | 26640 | 159840 |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. **«Սֆերա» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար եւ մերժել:

3. Նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել **«Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ-ին, «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ին, «Սոնարտ» ՍՊԸ-ին և «Դամկար» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. **«Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ-ի, «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի, «Սոնարտ» ՍՊԸ-ի և «Դամկար» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-4-րդ | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ՝ | բավարար |
| 1-ին, 3-4-րդ | «Առկտուր» ՍՊԸ՝ | բավարար |
| - | «ԷԼԵՎԵՅԹՈՐՍ ԻՄՓՈՐԹ ԸՆԴ ՍԵՐՎԻԶ ԳՐՈՒՊ» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1-4-րդ | «Պրոֆ Ալ» ՍՊԸ՝ | բավարար |
| 1-4-րդ | «Սֆերա» ՍՊԸ՝ | անբավարար |
| 1-4-րդ | «Սոնարտ» ՍՊԸ՝ | բավարար |
| 1-4-րդ | «Դամկար» ՍՊԸ՝ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին, որոնք ներկայացված են ստորև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 5 | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | | 230000 |
| | 2 | «Առկտուր» ՍՊԸ | | 129000 |
| | 1 | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | X | 92500 |
| | 3 | «Սոնարտ» ՍՊԸ | | 180000 |
| | 4 | «Դամկար» ՍՊԸ | | 183250 |
| 2 | 3 | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | | 74000 |
| | 1 | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | X | 35000 |
| | 4 | «Սոնարտ» ՍՊԸ | | 95000 |
| | 2 | «Դամկար» ՍՊԸ | | 60000 |
| 3 | 5 | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | | 600000 |
| | 3 | «Առկտուր» ՍՊԸ | | 479800 |
| | 1 | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | X | 250000 |
| | 2 | «Սոնարտ» ՍՊԸ | | 460000 |
| | 4 | «Դամկար» ՍՊԸ | | 491500 |
| 4 | 4 | «Գոռ Շեկոյան Էդուարդի» Ա/Ձ | | 168000 |
| | 2 | «Առկտուր» ՍՊԸ | | 124700 |
| | 1 | «Պրոֆ Ալ» ՍՊԸ | X | 112500 |
| | 5 | «Սոնարտ» ՍՊԸ | | 230000 |

| | 3 | «Դամկար» ՍՊԸ | | 133200 |
|---|---|---|---|---|

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Հ. Գուլաքյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել և պարզաբանումներ չեն տրվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Թ. Զաքարյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Ս. Հարությունյան

Ա. Մխիթարյան

Մ. Մեհրաբյան

Ա. Ջաբաղյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Հ. Գուլաբյան